№ 13 Յունվարի 27 Հինգշաբթի 1883 Յունվարի 27 Հինգշաբթի № 13

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք զիմում են ուղղակի Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

„ՄՇԱԿ"

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ՆԵՐԿԱՅ 1883 ԹՎԻՆ ՆՈՅՆ ԴԻՐՔՈՎ

ԵՒ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄԱՅՈՎ

I. ՏԻԵՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ II. ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՅՕԳՈՒԱԾՆԵՐ։ III. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր։ IV. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր։ V. ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։ VI. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ VII. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Ֆելիետօն, վէպեր, ինքնուրոյն և թարգմանական յօդուածներ գիտութեան ամեն ճիւղերից, թղթակցութիւններ։ VIII. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ։ Տարեկան 10 ռուբլ, վեց ամսվայ 6 ռուբլ, իւրաքանչիւր ամսվայ 1 ռուբլ։

ՀԱՏՈՎ համարները 5 կոպէկ։

ՀԱՍՑԷՆ. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հասարակական հիւանդութիւն։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Բագուից։ Նամակ Ախալքալաքից։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Աւստրօ-Ունգարիա։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ

Լինում են րոպէներ մարդկային հասարակութեան մէջ, երբ նա առանձին անհատի նման ամբողջապէս հիւանդանում է։ Ցանկացած հասարակութեան վրա նշմարվում է հոգեկան մի հիւանդութիւն, մի տեսակ խենդութիւն, որ վարակիչ ազդեցութիւն ունենալով, կպչում է հետզհետէ նոյն հասարակութեան բոլոր անդամներին և վերջ ի վերջոյ ներկայացնում է մեզ ամբողջութեամբ խենդացած մի հասարակութեան պատկերը։

Այդ տեսակ տեսարան ներկայացնում է մեզ այս րոպէիս հայ հասարակութեան այն մասը, որ ուսնեց նորերումս Սիմէօնեանցի քսան և հինգ ամեայ յօբելեանը։

Հայը ունեցել է Աբովեանցին, որ ստեղծել է մեր աշխարհաբար գրականութիւնը, մենք ունեցել ենք Նազարեանցին, որ իր քարոզած գաղափարներով, իր գրելու ձևով անմոռանալի դարագլուխ է կազմել հայոց նոր գրականութեան մէջ, մենք ունեցել ենք Ներսէս, որ հիմնել է առաջին հայոց դպրոց Անդրկովկասում, մենք ունենք Բաֆայել Պատկանեանին, որի ոտանաւորների իւրաքանչիւր տող դարձել է ժողովրդական երգ, մենք ունեցել ենք բժիշկ Թօստոմեանցին, որ առաջին ընկերութիւն է հիմնել հայերիս մէջ,—և այդ բոլոր մարդկանց մենք ոչ թէ միայն իրանց կեանքի ժամանակ չենք ուսնել, բայց և հիմա ոչինչ ցոյցով երբէք չենք յիշում, երբէք նրանց ոչ ոքի անունով մեր դպրոցներից մինի մէջ ոչ մի ստիպենդիա չենք նշանակել։

Բայց յանկարծ գտնվեցաւ այդ բոլոր հասարակական գործիչներից մէկը, որ բոլորից բարձր է,—դա Պետրոս Սիմէօնեանցն է, մի մարդ որ կատարելապէս անընդունակ յայտնվեցաւ որպէս ուսուցիչ և տեսուչ, որի տեսչութեան ժամանակ, նրա անընդունակութեան և անհոգութեան պատճառով, ահա քանի տարի շարունակ անասելի անկարգութիւն է տիրում Ներսիսեան դպրոցի աշակերտների մէջ, որի մասին այդ դպրոցից աւարտածները իրանք սարսափով են վկայում։ Այո՛. դա այն Սիմէօնեանցն է, որ 20 տարի „Մեղու" հրատարակելով, հայոց լրագրութեան անունը կատարելապէս կոտրեց, բացի սրանից ամեն ամիս, ամեն շաբաթ, նայելով թէ ով էր գօրեղ դառնում, փոխում էր իր ընթացքը։ Այն հիմնարկութիւնը, այն անձնաւորութիւնը որ մի շաբաթ առաջ պաշտպանութիւն էր գտնում „Մեղու" լրագրից, այսօր ենթարկվում էր նոյն թերթի սարսափելի յարձակումներին, և այլն։

Վերջապէս ինչ արժանաւորութիւններ ունի այս մարդը,—յայտնի չէ։ Բայց ապագայ պատմաբանը դեռ ցոյց կը տայ ինչ պակասութիւններ էլ ունեցաւ այս մարդը,—և ահա այս տեսակ մարդուն հայոց հասարակութիւնը՝ տղամարդիկ, կանայք, օրիորդներն անդամ ուղերձներ են ուղարկում, փունջեր են տալիս, ոսկեայ գրիչներ, արծաթեայ պսակներ են ընծայում, գիպսից կիսարձան են շինում և վերջապէս վճռում են մի քսան և հինգ հատ երեխաներ նրա անունով որդեգիր պահել այլ և այլ դպրոցներում։

Այն բանից յետոյ որ մեր հասարակութեան վրա մի տեսակ ընդհանուր հոգեկան հիւանդութիւն տիրելով, նա այդ զզուելի և անիմաստ ցոյցեր արաւ, որոնցից ապագայ սերունդները պէտք է կարմրեն,—երկար ժամանակ ամեն մի օրինաւոր հայ կամաչի ընդունել հայոց հասարակութեան կողմից որ և է մեծարանք, այն հասարակութեան կողմից որ նորերումս ուսնամբել է Պետրոս Սիմէօնեանին։ Ապագայ պատմաբանը կը բացատրի մեզ, անշուշտ, մեր հասարակութեան այժմեան հոգեկան այդ հիւանդային դրութեան պատճառները։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

—

Յունվարի 10-ին

«Մարդասիրական ընկերութիւնը» մտնում է իր գործունէութեան տասն և իններորդ տարեշրջանը, յունվար 27-ին հաշիւ տալով ընդհանուր ժողովի մէջ իր նախընթաց տարուան գործածների մասին։ Թէ ինչպէս տեղի կունենայ այս տարուան ընդհանուր ժողովը, այդ մասին կը խօսենք իր ժամանակին, սակայն նախ քան այդ, աւելորդ չէր լինի, կարծեմ, պատուական «Մշակի» մէջ երկու խօսք այդ առթիւ ասելու։

Ամբողջ 18 տարի անցել է ընկերութեան հիմնվելու օրից, սակայն նրա ընդհանուր ժողովի նիստերը ոչ մի բանով չեն զանազանվել միմեանցից. ինչպէս հասարակութիւնը չէ հետաքրքրվում ուրիշ հարցերով, նոյնպէս և այդտեղ, ընդհանուր ժողովի մէջ ներկայանում են իւրաքանչիւր տարի հարիւրաւոր անդամների մի սակաւաթիւ մասը միայն, և այդ խումբը իր նահապետական կարգով ընտրում է իրանից մի անձնաւորութիւն, որ մի և նոյն ժամանակ և փող և աղդեցութիւն ունենար։ Սակայն թէ արդեօք նա կարող էր իր ստանձնած պաշտօնը որպէս հարկն էր կատարելու, նա փոքր ի շատէ հասկացող էր այդ գործին։ Այդ հարցերը չեն հետաքրքրում նրան. նստածներից մէկը առաջարկում է նրան (նախապէս պատրաստած լինելով), և մնացած անդամները շատ գլուխ չը ցաւացնելու համար բոլորն էլ «այո» են ասում. կողմնակի բողոքները մի քանիների ի զուր են անցնում, երբ մեծամասնութիւնը այդպէս է ցանկանում։ Բայց ո՞րն է այդ մեծամասնութիւնը, միթէ նրանք իրենց ընտրելի անձնաւորութեան անկարողութիւնը չը գիտեն արդեօք. կարծում ենք որ շատ լաւ գիտեն, բայց, ինչպէս ասեցինք, նրանք մի նահապետական սովորութեամբ չը նայելով որ շատ անգամ նրանցից շատերը մասնաւոր տեղերում պախարակում են հին գործողների արածները, սակայն նրանք համարձակութիւն չունեն նրանց հեռացնելու։ Իւրաքանչիւր նոր ընտրութեան մէջ հազիւ կը տեսնէք մի փոքրիկ փոփոխութիւն. դարձեալ նոյն մարդիկը, դարձեալ նոյն անդամները. նրանք համարձակութիւն չունեն անդամ ընկերութիւնից կանոնաւոր հաշիւ պահանջել։ Անցեալ տարուայ ընդհանուր ժողովում, երբ դեռ դանձապահը պ. Թումայեանն էր, ընդհանուր ժողովի մէջ մի պարոն բարձրանալով հարցնում է. «ինչու ընկերութիւնը մի քանի տասնեակ հազարներ յանձնելով նրան, խորհուրդը նրանից ամենափոքր անդորրագիր անդամ չէ ստացած. ինչու ընկերութիւնը մաքուր կանոնաւոր հաշիւ չէ պահում, կամ նոյն իսկ դանձապահը իր կողմից, և եթէ ընկերութիւնն այդ ունէր, ինչու մանրամասն չէ առաջարկում Ընդհ. ժողովին և կամ հետևապէս ինչու Ընդհ. ժողովը մանրամասն հաշիւներ չէ պահանջում պ. դանձապահից։» Բարձրանում է մի ուրիշը և սկսում է երկար և բարակ ասել թէ կարծեմ ամենքդ էլ ճանաչում էք թէ դանձապահը ինչպիսի մարդ է. նա երբէք ընկերութեան փողերին վատ աչքով չի նայի, նա դրան կարօտութիւն չունի և նրանից մինչև անդամ հաշիւ պահանջել աւելորդ է, ուր մնաց այդպէս խոտութեամբ։ Ոչ մէկը չէ պատասխանում նրան. տիրում է մի դատապարտելի լռութիւն, չը նայելով որ հարցը առաջարկողը պնդում է։ Բայց և նա իրեն միայնակ գտնելով, ստիպված է լռել. ինչու չեն խօսում միւսները։ Մեղաւորը հասարակութիւն է. ինչու ընդհանուր ժողովում հարիւրաւոր անդամներից անդամ մի տասերորդը ներկայ չէ լինում. ինչու չեն խօսում, ինչու լռում են։ Ինչու համոզում են. մասնաւոր տեղերում թող պահպանեն դարձեալ իրենց բարեկամութիւնը, բայց հասարակական գործերի մէջ արդարացի քննադատութիւն պէտք է։ Կրկնում ենք, թող դան, թող բողոքեն դէմ առ դէմ, թող պահանջեն կանոնաւոր հաշիւներ. ոչ ոք նրանց մերժել չէ կարող, սակայն զաւապարտելի է այն վարմունքը, երբ ժողովի մէջ մի մեռելային անտարբերութեամբ լռում են, իսկ մասնաւոր տեղերում սկսում են խօսել, սկսում են թէ արդարացի և թէ անարդար բողոքել. զզուելի է այդ։ Երկու խօսք էլ և մենք կը վերջացնենք մեր ասելիքը։

«Մշակի» արած յանդիմանութիւնը Թիֆլիսի հասարակութեան դումայի ընտրութիւնների ժամանակ, Թիֆլիսեցիների անտարբերութիւնը նոցա իրաւունքի մասին, չէր կարող ընկերութեանը չը հետաքրքրել։ Շուտով տարին կը լրանայ և գուցէ լրագրութիւնը կը զարթեցնէ քնածներին, կը բացատրէ նոցա իրաւունքը և գուցէ այն ժամանակ հասարակութիւնը առաջուայ պէս չի նայի ընկերութեան գործերին։ Եւ ահա նա մոռացում է կապել մի կերպ մի յետադէմ լրագրի բերանը և նրան ամեն ժամանակ իր վճռանն ունենալ յարձակումներին դէմ գնելու։ Կը յուսանք որ «Մշակի» ձայնը առանց արձագանքի չի մնայ և այդ դէպքում։

Աբել Ագրեսեանց

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

—

Յունվարի 11-ին

Մենք մեր թղթակցութիւնների մէջ միշտ զանգատվում էինք, որ կանայք չեն մասնակցում տեղիս սիրողների ներկայացումներին և թէ այդ պատճառով, սիրողները ստիպված են բաւականանալ այնպիսի անալի պիէսներով, որոնց մէջ կինը բացակայում է։ Այդ իսկ պատճառով տեղիս թատրոնական բէպերտուարը սաստիկ կարճ էր, մանաւանդ որ յայտնի է թէ առանց կնոջ դերի, պիէսան մի և նոյն է ինչպէս մարմինը առանց հոգու։

Եւ զարմանալի չէր որ կանայք չէին մասնակցում ներկայացումներին, որովհետև այդպիսի քայլը բոլորովին նոր էր այստեղի համար. վասն որոյ հարկաւոր էր, որ այդ քայլը անող կինը ահագին տոկունութիւն և կամքի զօրութիւն ունենար ոտնակոխ անելու նախապաշարմունքը, առ ոչինչ համարէր ժողովրդի, մանաւանդ իր համասեռ դասի մէջ սկսուելիք բամբասանքները և յաղթէր բաղմաթիւ խոչնդոտներին։ Այդ պահանջներին համապատասխանող յայտնվեցան տիկին Վարդուհի Դէմիրճօղլեանցը և օր. Վարսենիկ Տիգրանեանցը։

Վերջապէս մի շարք տարիների ընթացքում կրած դժուարութիւնները այսօր վարձատրված տեսանք, երբ բաղդ ունեցանք տեսնել տեղական բեմի վրա առաջին անդամ հայ տիկին և օրիորդ, ամսիս 7-ին։ Այդ օրը թատրոնասէրների խումբը ներկայացնում էր «Շուշանիկ» ողբերգութիւնը և «Վայ քի իմ վէչեր» կոմեդիան։ Երեկոյեան՝ տեղւոյս հայոց ուսումնարանի դահլիճը լիքն էր երկու սեռի ահագին բազմութիւնով։

Տ. Վարդուհին՝ առաջին պիէսայում կատարում էր Շուշանիկի դերը, իսկ երկրորդի մէջ Կէկէլի դերը. իսկ օր. Վարսենիկը՝ առաջինի մէջ Շուշանիկի դստեր Սօֆիօյի դերը, իսկ երկրորդի մէջ Անանու դերը։ Պէտք է ասած որ չը նայելով, որ տիկինն ու օրիորդը առաջին անդամն էին դուրս գալիս բեմի վրա, չը նայելով որ «Շուշանիկ» ողբերգութիւնը բեմական նշանաւոր թերութիւններ ունի և որ «Վայ քի իմ վէչերի» թիֆլիսեան բարբառը անսովոր էր թատրոնասիրուհիների համար, երկուսն ևս շատ լաւ էին իրանց դերերում, մանաւանդ տ. Վարդուհին, որից՝—դատելով առաջին ներկայացումից,— մի շնորհալի թատրոնասիրուհի կարող է դուրս գալն։ Այդ երեկոյ տ. Վարդուհին մի ծաղկէ պսակ ընտացաւ ընծայ, որի մէջ տեղ փայլում էին «Վ. Դ.» ոսկեզօծ տառերը։

Հասարակութիւնը շատ գոհ մնաց ներկայացումից և ամենք ցանկութիւն յայտնեցին, որ կրկնվի ներկայացումը։ Վասնորոյ հետևեալ երեկոյ՝ 8-ին ներկայացումը կրկնվեցաւ։ Հասարակութիւնը նոյնպէս մեծ բազմութեամբ լցրել էր դահլիճը։ Նախընթաց օրվայ հանդիսականներից շատեր եկել էին կրկին անդամ տեսնել այդ ներկայացումը, որի նմանը ընդհանուրի կարծիքով, տեսնված չէր մեր բեմի վրա։ Միջոցներից մինի ժամանակ օր. Վարսենիկը՝ մի քանի ազգային երգեր երգեց, որոնց

համար հասարակութիւնը, իր գոհունակութիւնը յայտնեց բուռն ծափահարութիւններով: Բացի դրանից մի պարոն ընծայեց օրիորդին մի ծաղկեփունջ պսակ:

Հարկաւոր է արդեօք ասել, որ թատրոնասէրները մեծ ուրախութեան մէջ էին: Իրրև թատրոնասէր, այսքանը կասեմ որ իմ ուրախութիւնը անսահման էր, երբ հինգ տարիներից ի վեր յայտնած ցանկութիւնս իրագործված էր, երբ տեսնում էի որ հայ տիկին ու օրիորդ դուրս են գալիս իմ սիրած բեմի վրա, որ թատրոնի հիմնաքարը՝ կինը մասնակցում էր մեր ներկայացմանը և դորա մէջ մի գրական էլ տեսնում և տեղական ներկայացումների ապագայ աջողութեան:

Վերջացնելով նամակս կասեմ, որ 1883 թվի յունվարի 7-ի և 8-ի օրերը մի պատուաւոր տեղ կը բռնեն մեր թատրոնի տարեգրութեան մէջ: Ի դէպ է ասել որ մի պարոն պատրաստում է այդ տարեգրութիւնը: Մեր անկեղծ շնորհակալութիւնը յայտնում ենք Դէմիրճօղլեանց և Տիգրանեանց գերդաստանի անդամներին՝ որոնց շնորհիւ տ. Վարդուհին և օր. Վարսենիկը մասնակից եղան թատրոնի օգտաւէտ գործին: Կը մնայ մեզ ցանկալ որ մեր յարգոյ տիկիններն ու օրիորդները հետևէին տիկնոջ և օրիորդի օրինակին, որով տեղական թատրոնի գործը կարելի կը լինէր ապահոված համարել:

Թատրոնասէր

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 24 յունվարի

«Մշակ» պատուական լրագրիդ անցեալ տարվայ № 231 համարում մանաւորապէս խօսելով Հալաբարի նորաբաց «Հռիփսիմեան» օր. ուսումնարանի հիմնադրութեան մասին, ես խոստացայ մնացեալը գրել միւս անգամ: Ահա ուղարկում եմ, յարգելի խմբագրութեանդ, անցեալ նամակիս շարունակութիւնը:

Հոգաբարձութիւնս իր մէջից ընտրեց նախագահ, գանձապահ և անտես, իսկ ուսուցիչներից ընտրվեցաւ ուսումնարանի կառավարիչ հայր Մանդակունի, և քարտուղար պ. Բաղդասար Զարդեղեանցը: Հոգաբարձութիւնս որոշեց ստանալ աշակերտուհեաց թոշակները երկու նուագ, առաջինը՝ սեպտեմբերին, երկրորդը՝ յունվարին: Զրի ընդունվող աշակերտուհիների ծնողները պարտաւոր են առաջուց խնդիր ներկայացնել հոգաբարձութեանը, իսկ հոգաբարձական խորհուրդը երեք օրից յետոյ կը յայտնի իր պատասխանը: Ուսումնարանի բոլոր աշակերտուհիները պարտաւոր են ուսումնարան գալ, ուսումնարանի համար որոշած շրջազգեստով: Ուսումնարանի ուսման ընթացքը՝ երեք տարի է: Ուսումնարանը ունի իր անուանական կնիքը: Հոգաբարձուները բացի իրանց հոգաբարձական նիստերից, պարտաւոր են ամեն մէկը մի ամսով հերթակալ հոգաբարձուի պաշտօն կատարել:

Հռիփսիմեան օր. ուսումնարանի կանոնաւոր ուսումը սկսվել է ներկայ ամսիս 10-ից: Աշակերտուհիների թիւը արդէն հասել է 115-ի: Այդ 115 աշակերտուհիները դասաւորված են երեք պատրաստական դասարաններում հետևեալ կերպով՝ առաջին պատրաստականում—55, երկրորդ պատրաստականում—40, երրորդ պատրաստականում—20 աշակերտուհիներ: Ուսումնարանը այժմս ունի 5 ուսուցիչ և 4 վարժուհի: Առաջին պատրաստականը յանձնված է մի վարժուհու, իսկ երկրորդ և երրորդ պատրաստականներում պարապում են մընացեալ վարժուհիները և ուսուցիչները: Օրական լինում է 4 դաս և վերջը մարմնամարզութիւն: Առաւօտեան դասերը սկսվում են 8 մինչև 2 ժամը: Դասարաններում ուսանվում են հետևեալ առարկաները. հայոց լեզու, կրօն և բարոյագիտութիւն, թուաբանութիւն, գրութիւն, երգեցողութիւն, ձեռագործ, և մարմնամարզութիւն, իսկ միայն երրորդ պատրաստականում ռուսաց լեզու:

Ասելորդ չեմ համարում երկու խօսք էլ ասել աւագ սարկաւագուհի կոյս Հռիփսիմէ Թայիրեանցի մասին:

Հ. Թայիրեանցը ինչպէս որ ամեն մի հասարակական գործի մէջ միշտ ձեռնամուխ է եղել իր անձնանուէր գործունէութեամբ, և որի հասարակական գործունէութիւնը մասամբ յայտնի է հասարակութեանը, նոյնպէս էլ յարգելի կոյսը չը խուսափեց Հալաբարի նորաբաց Հռիփսիմեան օր. ուսումնարանին նպաստելուց, թէ նիւթապէս և թէ բարոյապէս: Դեռ Հռիփսիմեան օր. ուսումնարանը չը բացված՝ Հ. Թայիրեանցը յայտնել էր ուսումնարանի հիմնադիրներին իր բարի դիտաւորութիւնը, որը պատրաստ է ամեն կերպ օգնել այդ նորաբաց օր. ուսումնարանին: Յարգելի կոյսը ինչպէս խոստացել էր ավելի խօսքով, այնպէս էլ կատարեց իր խոստմունքը գործով. 1) ստորագրվեց մինչեւնաւոր պատուաւոր անդամուհի, 2) յանձն առաւ ուսումնարանի ամբողջ տարուայ ձեռագործի վերաբերեալ հարկաւոր զանազան իրեղէնները և գործիքները տալ իր սեփականութիւնից (մօտաւորապէս 300 ր.), 3) նմանապէս յանձն առաւ ձրի շաբաթական երկու դաս ձեռագործից պարապել երեք պատրաստական դասարաններում. բացի այն որ ուսումնարանին նուիրեց 50 հատ ընտիր գրեանք, և խոստացաւ որ ուսումնարանը այսուհետև պէտք է ստանայ իր հաշուով «Մշակ», «Մեղու» և «Աղբիւր»: Այդպիսի անկեղծ համակրութիւն կոյս Թայիրեանցի կողմից դէպի այդ նորաբաց ուսումնարանը, ի հարկէ հոգաբարձութիւնս այդ մասին չէր կարող լռութեամբ անցնել և չը յայտնել, ձեր պատուական լրագրի միջոցով, իր խորին շնորհակալութիւնը վերոյիշեալ կոյսին: Ահա մի կրթեալ մայր, որի սրտի մէջ յղացել է այն վսեմ գաղափարը՝ որը պէտք է ծառայի իր ազգի իգական սեռի զաւակների լուսաւորութեան համար:

Աղասի Մէլիք-Այվազեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կիրակի, 23-ին յունվարի, քաղաքագլխի ընտրութենից առաջ, քաղաքագլուխ Մատինով յայտնեց թէ Լ. Խարլովի դէմ գանգատ կայ, որ նա ձայնաւորների երկրորդ բաժնի ընտրութիւնների ժամանակ ինքն կանգնած էր իր արկղի մօտ և քուէները բաժանելով ընտրողներին, նրանց վրա այսպիսով ճնշում էր գործում: Անցնում է մի ժամ և ահա նոյն պ. Մատինով, քուէարկվելով քաղաքագլխի պաշտօնում, ինքն նստում է իր արկղի մօտ և քուէներ է բաժանում ընտրողներին: Եւ նա ընտրվում է քաղաքագլուխ: Արդեօք այդ ընտրութիւնն էլ վաւեր է:

—

ԳՕՐՈՒՑ մեզ գրում են թէ յունվարի 21-ին, գիշերվայ հինգ ժամին հրդեհ յայտնվեցաւ պ. Ստեփան Միրեանցի տանը, որ և այրվեցաւ: Գորի քաղաքում հրաշէջ մեքենաներ չը կան: «Եւ չը մոռանաք, ասում է թղթակիցը, որ Գորի քաղաքը ունի քաղաքային ինքնավարութիւն և լուսաւորված քաղաքագլուխ. բայց ոչինչ բանի վրա այդ ինքնավարութիւնը և քաղաքագլուխը ուշադրութիւն չեն դարձնում: Գորու փողոցները կեղտոտ են և այդ հանգամանքի վրա էլ ոչ ոք ուշադրութիւն չէ դարձնում:»

—

ՍՈՒՐԱՄԻՑ մեզ գրում են: «Յունվարի 19-ին, ներկայութեամբ Գորու Գարեգին վարդապետի, ընտրվեցաւ ընդհանուր համաձայնութեամբ տեղական երկսեռ ուսումնարանիս հոգաբարձութիւնը, չորս անձերից բաղկացած: Մենք մեծ յոյս ենք դնում այդ նոր հոգաբարձութեան վրա, որ նրա յարգելի անդամները կը ծառայեն ուսումնարանին, պահպանելով նրա իսկական շահերը:»

—

Ստացանք «Վարժարան» ամսագրի № 6 ներկայ 1883 թվի (յունվարի տետրակը) որ լոյս տեսաւ յունվարի 15-ին: Այդ տետրակի բովանդակութիւնը այս է: 1) Ժողովրդական տարրական դպրոցներում աշխարհագրութեան և բնագիտութեան դաս տալու եղանակն ու ծրագիրը.—Ս. Բէկ-Նազարեանցի. 2) Օրինակելի դասեր,—Ա. Բահաթրեանի. 3) Գրագիտութեան ուսուցման էութիւնը.—Ս. Մանդինեանի. 4) Մատենախօսութիւն և 5) Թւաբանական չափերի մասին.—Կ. Կոստանեանի. 6) Այլ և այլք. 7) Մանկական բաժին: Այդ վերջինը բաղկացած է հետևեալ կտորներից. ա) Մարմնամարզական խաղ, բ) Ճուտիկ, գ) Աղջիկը և լուցքին, դ) Ոստնող, ե) Երջանկութիւնը կարող է թագնվել և փայտի կտորի մէջ: Գրքոյկի վերջը տրված են. Զուարճալիք, հանելուկներ, խնդիրներ և վերջապէս յայտարարութիւններ: Պէտք է խոստովանվել որ «Վարժարան» ամսագրի տետրակները հետզհետէ աւելի և աւելի լաւ են կազմվում և հետաքրքիր են դառնում իրանց բովանդակութեամբ:

—

Այսօր ուղարկեցինք Կարսի հայոց դպրոցի հոգաբարձուներից մինին, բժիշկ Կաճկաճեանին, այն 20 բուբլ որ Թիֆլիսի առաջին գիմնազիայի հայ աշակերտները իրանց մէջ հանգանակեցին յօգուտ այդ դպրոցի և մեզ յանձնեցին որ մենք հասցնենք ուր հարկն է:

—

Ստացանք Վիէննայի «L'Oriental» լրագրի վերջին համարները, որոնց մէջ կան մի քանի համակրական յօդուածներ թիւրքաց հայերի վերաբերութեամբ:

—

Ռուսաց «Вѣстникъ Европы» ամսագրի յունվարի տետրակի մէջ հրատարակվեցաւ հռչակաւոր ռուս հեղինակ Տուրգենեվի նոր վէպը «Клара Миличъ» վերնագրով: Ասում են այդ վէպը եղելութիւն է: Շատերը յիշում են որ մէկ կամ երկու տարի առաջ մի ռուս դերասանուհի անձնասպանութիւն գործեց, թոյն ընդունելով: Այժմ Տուրգենեվ այդ անցքը վերցնում է որպէս հիմք իր վէպի համար: Վէպի հերոսուհին թոյն է ընդունում սիրահարվելով մի երիտասարդից: Տուրգենեվի վէպը գեղեցիկ կերպով է գրված, թէև վէպի միտքը շատ նոր միտք չէ և ինքն գրուածքը չունի ոչինչ տենդենցիա: Անյոյս սէր,—ահա Տուրգենեվի նոր հեղինակութեան ամբողջ միտքը: Բայց և այս վէպի մէջ երևում է որ ռուս հռչակաւոր հեղինակը ծերանալով, հետզհետէ միստիկական ուղղութիւն է ընդունում. ամեն բան կատարվում է նրա վերջին գրվածներում մարդու կամքից դուրս և նրա կամքի դէմ. մարդը ենթարկվում է մի կոյր, անգիտակցական վիճակին:

—

«Кавказъ» լրագիրը հաստատում է որ կիրակի երեկոյեան, վրաց ներկայացումից առաջ, վարագոյրը դեռ չը բարձրացած, Արծրունու թատրոնի դաղը հանգել էր: Դա կատարելապէս սխալ լուր է: Գաղը ոչ մի րօպէ հանգած չէր, միայն թատրոնի տէրը, իմանալով որ գաղի կապալառուն, պ. Ստարգէլա, այդ գիշերը բաւական գաղ պատրաստած չէր, այնպէս որ գաղը կը բաւականանար շատ շատ երկու ժամվայ համար և ոչ աւել, ինքն խնդրեց վրաց խմբին յետաձգել ներկայացումն, խոստանալով որ տուգանք կը վերցնի պ. Ստարգէլայից յօգուտ վրաց խմբի: Ճշմարիտ է խաղավարներից մէկը, որ հողով էր անցնում, փչացել էր, բայց նա միանգամից փչանալ չէր կարող, դաղ դարձեալ կար Թատրոնի բոլոր խաղավարներում և ոչ մի բօպէ չէր հանգել:

—

Կիրակի, 23-ին, Թիֆլիսի ժողովարանում պարահանդէս կար յօգուտ հայոց Բարեգործական ընկերութեան և հայոց դրքերի հրատարակման ընկերութեան և նոյն տեղ ալէգրի յօգուտ Հայուհեաց բարեգործական ընկերութեան:

—

Լսում ենք որ քաղաքագլխի ընտրութեան օրը ԹԻՖԼԻՍԻ արհեստաւորների գլխաւորները, գումարվելով, ստորագրեցին մի ուղերձ դումային, որի մէջ խնդրում էին ձայնաւորներին ընտրել քաղաքագլուխ իշխան Եազոն Թումանովին: Բայց իշխանը, տեղեկանալով արհեստաւորների այդ դիտաւորութեան մասին, խնդրեց որ չը ներկայացնեն ձայնաւորներին իրանց ուղերձը, ճնշում չը ներգործելու համար նրանց վրա և ինքն հրաժարվեց քուէարկվելուց:

—

Շնորհակալութեամբ ստացանք պ. Ա. Ստաղինից նրա բրօշիւրը ռուսերէն լեզուով «Политическое Обозрѣніе 1882 года» վերնագրով, որ բաղկացած է նրա այն յօդուածներից, որոնք տպվեցան այս տարի «Կավկաս» ռուսաց լրագրում:

—

Ստացանք Երևանի մէջ հրատարակվող «Առողջապահական թերթի» այս 1883 թվի առաջին համարը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՒՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԻԱ

—

„Pokrok" լրագիրը խօսում է Վուրմբրանդի առաջարկութեան վերաբերութեամբ լեզուի մասին և այդ առիթով ասում է հետևեալը:

„Վուրմբրանդի առաջարկութիւնը, մի կողմից, աւելորդ է, միւս կողմից անիրագործելի է: Եթէ որ Աւստրիայում մի ազգութիւն լինէր, այն ժամանակ այդ ազգութեան լեզուն անսահման կը տիրապետէր թէ ուսումնարանում և թէ պաշտօնական շրջանում: Եթէ որ Աւստրիայում երկու կամ երեք ազգութիւններ լինէին, այն ժամանակ այդ լեզուները կարող էին դոյութիւն ունենալ հաւասար իրաւունքով հասարակական հիմնարկութիւնների մէջ, և արձանագրութիւնները կարող էին գրվել երեք լեզուներով, ինչպէս որ այդ էական լանդտագում է լինում: Բայց Աւստրիայում շատ ազգութիւններ կան, և անկարելի է պահանջել, որ նրանք բոլորն էլ հաւասար իրաւունքներ ունենան, և որ բոլոր պաշտօնեաները գիտենան նրանց լեզուները: Պէտք է մէկ լեզու լինի ընդհանուր համաձայնութեան համար, և այդ լեզուն գերմաններէնն է, որը ամենքը հասկանում են: Այդ պատճառով աւելորդ է հաստատել նրա տիրապետութիւնը օրէնքով:" Վուրմբրանդ, բացի դրանից, պահանջում է, որ գերմանական լեզուն հրատարակվի ամեն տեղ տիրապետող պաշտօնական շրջաններում, իսկ տեղական լեզուները գործածվեն միայն ընտանեկան շրջանում, որի պատճառով, նրանք արգելութեամբ կանհետանան տիրապետող լեզուի ճնշման տակ: Այդ բանը մինչև անգամ չէին պահանջում ոչ Բախ, և ոչ կոյսը Ցովսէփ: Այդ առաջարկութիւնը մեռածին երեխայ է: Նրան կընդդիմադրեն ոչ միայն չեխերը, բայց և բոլոր ուրիշ ոչգերմանական ազգութիւնները: Մինչև անգամ և գերմանական պատգամաւորները բողոքում են դրա դէմ, որովհետև տեսնում են դրա մէջ անբարոյական, աւելորդ և անիրագործելի մի փորձ:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԲԻԱՑԻՑ

—

Տրապիզոն 21 յունվարի

Կարնոյ խնդրոյ մասին նոր լուրեր չը կան, ձերբակալուածներուն մէկ մասը դեռ բանտերու մէջ կը մնան: Անցեալ օր Կարնէն եկած մէկ հաւատարիմ ճամբորդ հետևեալը լսեցի, իբր թէ մի ձերբակալուած երիտասարդի շատ նեղութիւն տուեր են իմանալու համար թէ ով է այս ընկերութեան գլխաւորը, կամ ով ուղղութիւն կուտայ այս յեղափոխական ձեռնարկութեանց: Երիտասարդը շատ ժամանակ ընդդիմանալէ յետոյ պատասխաներ է թէ «մեր գլխաւորները այս տեղից շատ հեռու են, դուք նոցա ոչինչ չէք կարող ընել»: Երբ նորէն խստութեամբ պահանջուեր է թէ ովքեր են ձեր գլխաւորները, երիտասարդը պատասխաներ է «մեր գլխաւորները ազատասէր մարդիկներ են, որոնք կոմիթէներ կազմած են Լօնդոնի, Փարիզի և գրեթէ բոլոր Եւրոպական քաղաքներու մէջ:» Թիւրք պաշտօնատարներ ապշած են այս բանը լսելով, բայց ես կը զարմանամ և կը տարակուսիմ:

Այդ բանը դժուար հաւատալի է. առ այժմ ուրիշ ոչինչ փաստ չը կայ այդ բանը հաստատելու:

Հիմա մտածենք թէ ինչ նշանակութիւն կրնայ ունենալ Կարնոյ խնդիրը հայոց կեանքի մէջ կամ ինչ ազդեցութիւն կրնայ ունենալ նոցա ապագայի վրայ, օգտակար թէ վնասակար: Ընթերցողներէն շատերը օգտակար և շատերն վնասակար պիտի դատեն: Ես ապատ կը թողում ընթերցողը ինչպէս կուզէ այնպէս թող դատէ:

Թիւրք կառավարութիւնը Հայաստանի կողմերը գտնուած զօրաց մէջի բոլոր հայ բժշկները, զինզործները և վիրաբոյժները պաշտօնանկ ըրած է:

Այդ հայ պաշտօնեաներու հեռացումը Հայաստանէն քաղաքական պատճառով է:

Ակէ մի քանի տարի առաջ Հայաստան գրնուած օսմանեան բանակին մէջ քանի չափ հայ բժշկութեամբ պարապողներ կային, այսօր ոչ ոք չը մնաց: Այսօր տեսայ մի հայ վիրաբոյժ որ վերջինը լինելով, իբր պաշտօնանկ Հայաստանէն կը հեռանայ դէպի Պոլիս: Այդ պարոնէն լսեցի որ կառավարութիւնը Հայաստանէն պաշտօնանկ եղած հայերը Արաբիստանի խորերը կը խրկէ ոտ իբրևանց համար ապրել անկարելի է:

Պոլսոյ լրագրաց մէջ կը կարդանք որ Պոլսոյ «Մամուլ» գաւեշտական թերթի խմբագիրը բան-

տարկուած և թերին ալ խափանուած է Կիւրինէն եկած մէկ ոտանաւոր գրութիւն մը հրատարակելուն պատճառաւ. այդ գրութեան պատճառով Կիւրինի մէջ ալ 30-ի չափ մարդիկ բանտարկուած են: Բերնէ բերան կը լսուի թէ Կիւրինի մէջ բանտարկուածներն ալ Կարնոյ յեղափոխականներու հետ յարաբերութիւն ունեն: Կիւրինը Սեբաստիայի մօտ փոքր-Հայաստանի մի քաղաք է, բաղմաթիւ հայերով:

***

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Հռովմէական պապը մի կոնդակ ուղարկեց Դուբլինի արքեպիսկոպոս կարդինալ Մակ-Կէբիին, որի մէջ խօսում է Իրլանդիայի գրութեան մասին: Պապը նախազգուշացնում է իրլանդական ժողովրդին «անաստուած չարագործների» մտադրութիւններից ու գործերից և ամենասաստիկ կերպով դատապարտում է այն յանցանքների մասնակցողներին, որոնք խայտառակում են իրլանդացու անունը: Կարդինալը ուղարկեց այդ կոնդակի պատճէնները իր թեմի բոլոր եպիսկոպոսներին:

—Թիւրքիայի և Յունաստանի մէջ վերջին ժամանակ աւելի բարեկամական յարաբերութիւններ հաստատուեցան: Նրանից յետոյ, երբ սահմանների հարցի մասին եղած բոլոր դժուարութիւնները վերջացան, սկսուեցան սաստիկ բարեկամական յարաբերութիւններ երկու պետութիւնների մէջ: Վերջին ժամանակում Թիւրքաց Հայաստանում եղած յուզմունքները, եթէ հաւատանք «Times» լրագրի խօսքերին, ոչ այլ ինչ էին, եթէ ոչ փոքրիկ մի բաժակ ջրի մէջ: Թշուառ հայերը բանտարկուած են:

—Ֆրանսիական դեսպանի և թիւրքաց արտաքին գործերի մինիստրի մէջ, վերջին ժամանակս յաճախակի խորհրդակցութիւններ են լինում Եգիպտական խնդրի վերաբերութեամբ: Լուր է տարածուած, որ նրանց մէջ արդէն սկզբունքով համաձայնութիւն է կայացել—չընդունել անգլիական յայտագիրը:

—Լիվաւորից Նիւ-Եորկ հաղորդում են, որ այնտեղ յեղափոխականները յաղթող հանդիսացան և որ հանրապետութեան մէջ տրիումֆիրաա է հիմնուած, որը բաղկացած է Կարբօ, Մոնտալվօ և Ալֆարօ պարոններից. վերջինը այդ կառավարութեան մէջ դիկտատորի դեր է խաղում:

—«Allgemeine Zeitung» լրագրին Փարիզից գրում են յունվարի 23-ից: Ժիւլ Ֆերրի, որը, ընտանեկան ողի պատճառով, մի քանի օր հեռու էր մնում քաղաքական ասպարէզից, «հանրապետական դաշնակցութեան» բաժնի համար կուսակիցներ է գրաւում և որոնում է, ի հարկէ, այնպիսի անդամներին, որոնք կընդունեն նրա գլխաւորութիւնը: Նրան ճշմարիտ որ յաջողուեցաւ «ղէմոկրատական դաշնակցութիւնից» երեք պատգամաւորներին խլել: Ֆերրին, ինչպէս երևում է, մտադիր է վերադառնալ դամբէտտական ասողութիւններին և հիմնել ստուար կառավարչական կուսակցութիւն, որը, ամենից առաջ, մատնացոյց կանէր նրա վրա, որպէս անհրաժեշտ մինիստր-նախագահի վրա, և ապա կը հետևէր նրան, ուր որ նա նրան կը տանէր: Բայց Ֆերրին երկու արգելքների է հանդիպում. Դամբէտտական կուսակցութեան անձնական անհամակրութիւնը, մանաւանդ պ. պ. Բանկի և Շալմել-Լակուրի, և անկախութեան ոգուն, հանրապետական մեծամասնութեան բազմաթիւ անդամների կողմից, որոնք չեն կամենում անպայման նրան հնազանդուել, որովհետև Դամբէտտային ևս անպայման չէին հպատակվում: Միւս կողմից հաւատացնում են, որ Ֆրէյսինէ միակ մրցողն է Ֆերրիի հետ, բայց չէր կամենայ յանձնառու լինել գործերի այժմեան խճճված դրութիւնը կարգի բերել: Այնու ամենայնիւ, ազատամիտ մինիստրութեան նախկին նախագահը հաղիւ թէ կը հրաժարվի իր բարեկամ Գրէվիի հրաւէրն ընդունելու: Գործերի դրութիւնը երբէք չէր լաւանայ և Ֆլոկէ-Կլէմանսօի մինիստրութիւնը կազմակերպելով: Այդպիսի մինիստրութիւն, նկատում է «Times» լրագիրը, շատերին կը վախեցնէր Ֆրանսիայում: «Կեօլնեան լրագրի» թղթակիցը հաստատում է այն լուրը, որ իբր թէ Բօաշիլդ վճռապէս դիտաւորութիւն ունի բնտան պակասեցնել մինչև 100, եթէ որ կառավարութեան գլուխ կը կանգնի սրմատական մինիստրութիւնը:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Այժմեան Գլադստոնեան մինիստրութիւնը 14 անդամներից է բաղկացած, որոնցից եօթը համայնքների ժողովի անդամ են, իսկ եօթն մասնակցում են լորդերի ժողովին: Նրանցից տարիքով ամենամեծը ինքն Գլադստոնն է (որը այժմ 73 տարեկան է) և լորդ կանցլէր, կոմս Սէլբորն (71 տարեկան): Ամենից երիտասարդը սեր Չարլզ Դիլկն է 40 տարեկան, որը նորերումս նշանակված է տեղական ինքնավարութեան բաժնի նախագահ. եօթն մինիստրներ, որոնց թւում և պրէմիէրը, ստանում են իւրաքանչիւրը 8,000 ֆունտ ստէրլինգ ռոճիկ, իսկ հինգ մինիստրներից իւրաքանչիւրը 2,000 ֆ:

***

Գրավաճառութիւնը և Ֆէրգանայի մահմեդական դրականութիւնը: Դեռևս նոր ժամանակներում Միջին Ասիայի մահմեդականները բաւականանում էին թէ ուսումնարանում, թէ դատարաններում և թէ ընտանեկան կեանքում ձեռագիր գրքերով: Մինչև վերջին ժամանակները տպագրված գրքեր շատ հազիւ էին գործածվում: Իսկ վերջին հինգ վեց տարիներում զանազանակերպ բովանդակութիւն ունեցող տպագրված և վիմագրված գրքերի հոսանքը արտասահմանից իւրաքանչիւր տարի մեծանում է: Այդ կողմից յօգուտ մահմեդական լուսաւորութեան գործում են բացառապէս Արևելեան Հնդկաստանի (մանաւանդ Բոմբէյի), Սամարղանդի, Եգիպտոսի և Քազանի տպարանները և վիմագրատունները: Նրանց հրատարակութիւնները տարածվում են Միջին-Ասիայի ամբողջ տարածութեան վրա, Կաշգարից մինչև Խիվա: Հրատարակչական գործունէութեան մէջ Ռուսաստանի մասնակցութիւնը շատ թոյլ է. Կազանի տպարանները Միջին-Ասիայում տարածել են «Գէֆտիէկի» օրինակների անհնչան քանակութիւն. իսկ նրանց տպած մնացած հեղինակութիւնները (Բարբար նամէ, զանազան բանաստեղծութիւններ, դասագրքեր) շատ քիչ յայտնի են Միջին-Ասիայում: Արտասահմանում տպված վիմագիր և տպագիր գրքերը մահմեդական ազգաբնակութեան մէջ տարածվելուց յետոյ, որոնք ձեռագիր գրքերից շատ էժան են ծախվում, վերջինների թիւը շատ պակասեց. մի և նոյն ժամանակ փոքրացաւ գրքեր արտագրելու արժողութիւնը և պակասեց խմամների, մուղարրիների և մօլլաների աշխատանքը, որոնք աղաս ժամերին պարապում էին գրքեր արտագրելով: «Турк. Вѣдом.» լրագրում այդ առարկային նուիրված է մի յօդուած, որի հեղինակը այցելելով Կօկանդ քաղաքի ամենագլխաւոր ուսումնարանները, որոնցից ամենաառաջնակարգ համարվում են խանեան և Սուլթան-Մուրադ-բէգի մէդրէսէները, և նոյնպէս պատելով բոլոր խանութները, ազգաբնակութեան մէջ տարածված արտասահմանեան տպագիր և վիմագիր գրքերի և նոյնպէս արևելեան զանազան հեղինակների ձեռագիրների մի ցուցակ կազմեց. այդ ժամանակ նկատվեցաւ, որ պատմական բովանդակութիւն ունեցող ձեռագիր գրքերը շատ քիչ են բազմանում. նրանք պահվում են տներում և մեծ խնամքով սերունդից սերունդ են անցնում, աւելի և աւելի թանգագին դառնալով տիրոջ համար, որովհետև դիտական ընթերցողները զանազան բացատրութիւններ են տալիս այդ գրքերին:

***

Մի հետաքրքիր կտակ: Նորերումս վախճանված ունդարական փաստաբան Կէպ 2000 դուկատ կտակեց Պէշտի դիտութիւնների ակադեմիային այն պայմանով, որ նա պրէմիա նշանակի ամենալաւ կերպով վճռելու այս հարցը, թէ ինչպէս պէտք է յարաբերութիւններ հաստատել մեր երկրի և լուսնի բնակիչների մէջ: Եթէ յայտնի ժամանակամիջոցը լրանալուց յետոյ այդ հարցը վճռված չի լինի, այն ժամանակ փողերը ակադեմիայի սեփականութիւն կը դառնան:

***

Գրադարան ընթերցանութեան համար Լօնդօնում: Լօնդոնում կայ «Circulations library», այսինքն ընթերցանութեան համար գրադարան, որը իր անդամին չափերով առանձին ուշադրութեան արժանի է: Նրա հարստութիւնը այնքան զարմանալի է, որ մեզ համար մինչև անգամ դժուար է մօտաւորապէս հասկացողութիւն կազմել: 1842 թվին Չարլզ Էդուարդ Մէդզի հիմնեց այդ գրադարանը, որը քառասուն տարվայ ընթացքում այնքան մեծացաւ, որ գրաւում է այժմ եօթն հարևան տներ Օկսֆորդ-ստրիտում: 1864 թվին ակցիոներական ընկերութիւն կազմվեց 100,000 ֆունտ ստէրլինգ հիմնական դրամագլխով այդ գործը առաջ տանելու համար: Ինքն Մէդզի 50,000 ֆ. ստերլինգի ակցիաներ գնեց. մնացած ակցիաները տարածվեցան հասարակութեան մէջ: Մէդզին նշանակվեց գրադարանի պիրեկտոր 1,000 ֆ. տա. ռոճկով: Նա տասն և ութ օգնականներ ունի: Մակօլէյի «Անգլիայի պատմութիւնը» այդ գրադարանում 2,400 օրինակներ կան, Լիվինգստոնի Աֆրիկայում ճանապարհորդութիւնը 2,000 օրինակ, Տէնիսոնի հեղինակութիւնները—2,500 օր., Դիզրաէլի «Լոռդը» բոմանը—3,000 օրինակ, «Edinburgh» և «Quarterly Revew» ստացվում են իւրաքանչիւրից 6,000 օրինակ և այդ ահագին թիւը չէ բաւականանում. «Revue des deux mondes» ամսագիրը 100 օրինակ է ստացվում և այլն: Գրադարանի գրամագլուխը միլիոնաւոր է:

***

Յունվարի 24-ին, առաւօտեան, Դարմշտատում վախճանվեցաւ յայտնի երաժիշտ Ֆլօտով: Նա ծնվեցաւ 1812 թվի ապրիլի 27-ին Մէկլենբուրգում, հայրական կալուածքում: Հայրը նրան պատրաստում էր դիպլոմատական ասպարէզի համար, բայց նրա դէպի երաժշտութիւնը ունեցած սէրը յափշտակեց երիտասարդին, և նա ամբողջապէս նուիրվեց նրան: Իր կեանքի ամենալաւ տարիները Ֆլօտով անցկացրեց Փարիզում: Նրա ամենայայտնի օպերաներն են «Սարաղէլլա», «Մարթա», «Ստուեր»: 1856 թվին նա ընդունեց պալատական թատրոնի մտաւոր պաշտօնը Շվերինում, բայց 1863 թվին արդէն վերադարձաւ Փարիզ: Վերջին տարիները Ֆլօտով համարեա կուրացաւ և մշտապէս մնակվում էր Դարմշտատում, իր քրոջ մօտ: Կիսակոյր դրութեան մէջ նա ներկայ էր անցեալ տարի Վիէննայում «Մարթա» օպերայի 500-երորդ անդամ ներկայացնելու յօբելեանին: Ծերութեան ժամանակ Ֆլօտով մի քանի բոմանսներ գրեց, որ նուիրեց իր կնոջը:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 յունվարի: Երէկ Էդինբուրգեան դուքսը որսի գնաց Մեծ Իշխան Ալէքսէյ Ալէքսանդրովիչի հետ: Վաղը պարահանդէս է նշանակված Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչի մօտ:

ՅԵՏԻՆԻԷ, 24 յունվարի: Զէրնոգորիան բանակցում է պապի հետ Անտիվարում կաթոլիքական եպիսկոպոսութիւն հաստատելու մասին և կոնկորդատ (դաշնակցութիւն) կապելու վերաբերութեամբ:

ՍԻՄՖԷՐՈՊՕԼ, 24 յունվարի: Նահանգական զեմստվոյի ժողովի մէջ առաջադրութիւն է մտցրած անհող մշակներին և անձնական ազնուականութիւն չունեցողներին հող տալու մասին:

ՎԻԷՆՆԱ, 24 յունվարի: Երէկ և այսօր կայսրի նախագահութեամբ աւստրիական և ունգարական մինիստրները խորհրդակցում էին սարաեվոյական ճանապարհներ շինելու մասին Ունգարիայում և Գալիցիայում և աւստրիական լանդվերի (պահեստի զօրք) կազմակերպութեան մասին:

ՓԱՐԻԶ, 24 յունվարի: Այսօր դատաստանական քննիչը յանձնեց պրոկուրորի եզրակացութեանը իշխան Նապոլէոնին դատի ենթարկելու մասին վճիռը գոյութիւն ունեցող կառավարութեան ձևը ոչնչացնելու փորձ անելու համար: Պրոկուրորը կը ներկայացնէ իր եզրակացութիւնները դատաստանական պալատային, երևի, հինգ օրից յետոյ: Փարիզի հինգերորդ ընտրողական շրջանում պատգամաւոր է ընտրված գօկտոր Բուրնէվիլ արմատական-սոցիալիստը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 յունվարի: Այսօր Մեծ Իշխանուհի կսենիա Ալէքսանդրօվնայի անուանակոչութեան պատճառով Անիչկով պալատի եկեղեցու մէջ մաղթանք կատարվեցաւ Թագաւոր Կայսրի, Կայսրուհու և ուրիշ բարձրագոյն անձերի ներկայութեամբ. յետոյ նախաճաշիկ կար, որից յետոյ Սլաֆիանսկու երգեցիկ խումբը երգեց ռուսաց և սլաւոնական երգեր և ի միջի այլոց հին երգը. «Փառք Մեծ Թագաւորին, փառք»: Այսօր երեկոյեան Անիչկով պալատի եկեղեցում, Նրանց Մեծութիւնների ներկայութեամբ, կը կատարվի ներքին գործերի մինիստրի օգնական գեներալ Օրժէվսկու պսակը Ֆրէյլինա իշխանուհու Շախովսկու հետ:

ԲԵՐԼԻՆ, 25 յունվարի: Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեվիչ երէկ նայում էր քաղաքի արժանայիշատակ տեղերը, իսկ այսօր ուղևորվում է դէպի Պետերբուրգ, յուսալով նորից գալ այստեղ փետրվարի 28-ին:

ՓԱՐԻԶ, 25 յունվարի: Իշխանների գործի վերաբերութեամբ սենատի ընտրված յանձնաժողովը դատապարտում է պատգամաւորների ժողովում քուէարկված օրինագիծը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 յունվարի: Բարձրագոյն հրովարտակ. „Ողորմութեամբ Աստուծոյ Մենք, Ալէքսանդր Երրորդ, Կայսր և Ինքնակալ ամբողջ Ռուսաստանի, Թագաւոր Լեհաստանի, Մեծ Իշխան Ֆինլանդիայի և այլն և այլն և այլն, յայտնում ենք Մեր բոլոր հաւատարիմ հպատակներին. Աստուած կամեցաւ բարձրացնել Մեզ Մեր նախահայրերի համայն Ռուսաստանի, և նրա հետ անբաժան Լեհաստանի և Ֆինլանդիայի գահը: Սարսափելի ցնցման բուքին, վշտի և սարսափի ծանր զգացմունքների ժամանակ, որոնք Մեզ հետ միասին պատեցին և մեր բոլոր հաւատարիմ հպատակներին, տարաժամ էր նշանակել և կատարել թագադրութեան հանդէսը: Հնազանդվելով նախախնամութեան անիմանալի տնօրինութեանը և Աստուածային ցուցմանը, Մենք վճռեցինք չը կատարել այդ սրբազան գործը մինչև չը հանգստանան զգացմունքները, որոնք վրդովված էին սարսափելի եղեռնագործութեամբ, որի զոհ գարձաւ իր ժողովրդի բարերարը և մեր ամենասիրելի ծնողը: Այժմ հասաւ ժամանակը կատարել Աստուծոյ կամքը և իրագործել մեր և հայրենիքի հաւատարիմ բոլոր զաւակների ցանկութիւնը: Հետևելով մեր նախահայրերի բարեպաշտ թագաւորների օրինակին, Մենք մտադրվեցանք թագադրվել և որոշված կանոնի համեմատ ընդունել մեռնօծութիւն, մասնակից անելով Մեզ Մեր սիրելի Ամուսին Կայսրուհի Մարիա Ֆէոդորովնային: Յայտնելով Մեր այդ դիտաւորութիւնը, որ Աստուծոյ օգնութեամբ պէտք է կատարվի մայիս ամսին Մոսկվա մայրաքաղաքի մէջ, հրաւիրում ենք Մեր բոլոր հաւատարիմ հպատակներին միանալ մեր ջերմ և հեզ աղօթքի հետ: Թող Ամենակալն Աստուած պահպանէ Մեզ և Մեր թագաւորութիւնը խաղաղութեան և ապահովութեան մէջ, թող իջեցնի մեզ վրա իմաստութեան հոգի: Թող օգնէ մեզ, որ մեր երջանկայիշատակ նախորդների թագը Մեր գլխին դնելուց յետոյ կարողանանք կատարել մեր տուած ուխտը. նուիրվել ամբողջապէս սիրելի հայրենիքի բարօրութեանը և փառքին, ծառայել ճշմարտութեանը և Աստուծոյ կամքով Մեր կառավարութեանը յանձնված ժողովրդի բարօրութեանը: Տուած է Ս. Պետերբուրգի մէջ յունվարի 24-ին 1883 թուականին և Մեր թագաւորութեան երկրորդ տարվայ մէջ: „ԱԼԷՔՍԱՆԴՐ“

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 յունվարի: Հրատարակված են նոյնպէս բարձրագոյն հրամաններ, որոնցով թագադրութեանը Մոսկվա են հրաւիրվում. ազնուականների նահանգական առաջնորդները, նահանգական քաղաքների քաղաքագլուխները, բացի Սիբիրիայի, նրա հեռաւորութեան պատճառով և նահանգական զեմստվոների վարչութիւնների նախագահները: Բացի այդ հրաման է տուած թագադրութեան առանձին մասնաժողովին պալատական մինիստրի առաջնորդութեամբ պատրաստութիւններ տեսնել թագադրութեան համար:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

(ԿՈՒԿԻՍ, ՍԻՄԷՕՆՕՎՍԿԻ ՓՈՂՈՑ, Տ. ՀԱԽՎԵՐԴԵԱՆԻ)։

Հիւանդները ընդունվում են ամեն օր։

Առաւօտեան՝ 9—11 ժ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—*վիրաբուժութեան և վեներական հ. և* ԲՈՒԴԿՈՎՍԿԻ—*կանանց, երեխայոց և ներքին հ. 10—12 ժ.* ՇԱՀԱԶԻԶԵԱՆՑ—*ներքին հ. 12—1 ժ. աչքացաւի* ԼԱՒԻՕՆՕՎ—*ամեն օր, բացի չորեքշաբթի և կիրակի և* ՐԵՅԽ—*չորեքշաբթի և կիրակի։*

Երեկոյեան՝ 5—7 ժ. ՈՒՇԱԿՕՎ—*երեխայոց և կոկորդի հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Զղային և հոգեկան հ. և էլեկտրա-բուժութեան* ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑ—*ամեն օր և, իբր խորհրդակից նոյն հիւանդութեանց համար,* Ա. ԲԱԲԱՅԵԱՆ—*երեքշաբթի և շաբաթ։ Ընդհանուր բժշկական խորհուրդ (կօնսուլտացիա)—երեքշաբթի և շաբաթ 7—8 ժամը երեկոյեան։ Գիշերօթիկ հիւանդներ։ Վարձ՝ խորհուրդ երթևեկներին—50 կոպ. կօնսուլտացիան— 3 ռուբ. չքաւորները—անվարձ։*

Հիւանդանոցումը ընակվում է ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԸ։

Դոկտոր Բաբայեանը կը սկսի ընդունել հիւանդներին Յունվարի 8-ից. Յունվարին կը բացվի հիւանդանոցումը և Զրաբուժական բաժանումն, որին կը ձեռնարկի բժիշկ Տելեֆուսը։

(չոր. ուրբ.)

ԾՈՎԱՅԻՆ ԽՈՏ *մեծ քանակութեամբ 2 ռ. 40 կ. պուդը, իսկ մի հակ (մօտ 9 պուդ) առնողների համար 2 ռ. 20 կ.։* **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** *մէջ նոյն տեղը լապաներներ 30 կոպէկից,* ԹԷՑԱՄԱՆՆԵՐ *35 կ., 100 ասեղը 8 կ., պատառակներ 20 կ., կօնֆետներ լուծողական ձէթից, փօշի լուացքի համար։ Բժշկական թուղթ վատերա-կլօզետի համար։* ՄԵՂՐԱՄՈՄ *32 կ. անգլիական ֆունտը։ Մակինտօշներ 6 ռ. և այլն։*

5—10

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԴՈՒՐՍ ԵԿԱՒ

„ԱՂԲԻՒՐ“

ամսագրի I համարը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

I Շնորհաւոր նոր տարի, բանաստեղծութիւն . . . . . Ղ. Աղայեանց
II Ուրիշի բունը քեզ բուն չի դառնալ. ծիծեռնակների կեանքից—օր. Մ.
III Օձամանուկ և Արևահատ ազգային հէքիաթ. . . . . Ղ. Աղայեանց
IV Թագաւոր և Արհեստաւոր (վրացերէնից). . . . . օր. Ն. Տ. Մ.
V Աղաւնիներ (Տուրգենևից) Բաֆֆի։
VI Հետաքրքիր լուրեր. Զուարճալիք։
VII Հանելուկներ, շուտասելիքներ ընբուշներ, շախմատի, թուաբանական խաղեր և այլն։
VIII Թիթեր, նոտաներով երգ.

Երկրորդ բաժին.

I Խմբագրութեան կողմից.
II Մատենախօսութիւն՝ իմ նամակները Գաբ.
III Մահացուցակ.
IV Խառն լուրեր.
V Առաջարկութիւններ.
VI Պատասխաններ.

Յայտարարութիւններ

Որովհետև ամսագրի կազմի նկարը Պետերբուրգից պէտք է ստացուի ամսոյս 25-ն այդ պատճառով յունվարի համարը ուշացած կը լինենք միայն ամսոյս վերջին ուղարկել բաժանորդներին։

Տ. Նազարեանց

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

БРОШЮРА

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ, ԹԷՑԻ ԳՆԵՐԻ ՆՇԱՆԱՒՈՐ ՓՈՓՐԱՑՈՒՄՆ

(MAISON DE CONFIANCE) ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԵՐԻԱ № № 156, 157, 158, 159 և 160.

Համեմատեցէք թէյ

1 ռ.	10 կ.	թէյի հետ ամեն տեղ	1 ռ. 30 կ.
1 „	20 „	. . . . .	1 „ 60 „
1 „	40 „	. . . . .	1 „ 90 „
1 „	60 „	. . . . .	2 „ 20 „
1 „	80 „	. . . . .	2 „ 50 „
ամենալաւը	2 ռ.	. . . . .	3 „ ——

Մի և նոյն տեղը գործակալութիւն վաճառման շօկոլադի և կակաօ-ֆրայ էսսենցիայի, պալմերի բիսկվիտների, բազրի կօնֆեկտների, Շեֆելդի դանակների, Տուրնելի զրիչների, Դաուի հրացանների, վեկլիի ըէվոլվերների, Բարնսբիի թամբերի, Մեկինի ամաններ, կոլմանի կրախմալ և մանանեխ, Շվարցի սլրօցներ և այլն և այլն։

54—100

ՐԱՖՖԻ

ԽԱՄՍԱՅԻ

ՄԷԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԳԻՆՆ Է 1 Ռ. 50 Կ.

Գիրքը բաղկացած է 467 երեսներից

Թիֆլիսում վաճառվում է՝

„Մշակի“ խմբագրատանը.—„Կենտրոնական գրավաճառանոցում“ Միրիմանովի տանը № № 3 և 4. Պ. Զաքարիայ Գրիգորեանցի „Կովկասեան գրավաճառանոցում“.—Պ. Էնֆիաճեանցի ծխախոտի խանութում.— Պ. Շահինեանցի ծխախոտի խանութում։

Օտարաքաղաքացիք կարող են դիմել կամ ուիշեալ տեղերը, կամ ուղղակի հեղինակին հետևեալ հասցէով։

ТИФЛИСЪ. Редакція „Мшакъ“.

РАФФИ.

ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ընդհանուր ժողովի նիստը, խորհրդի մնացեալ երկու անդամներ և հինգ փոխանդամներ ընտրելու համար, տեղի կունենայ ամսիս 30-ին, կիրակի օրը, առաւօտեան 11 ժամին, Արծրունու թատրօնական դահլիճումը։ 1—3

ՂԱՐԱԲԱՂԻ

ԱՍՏՂԱԳԷՏԸ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

ՊԼԱՏՕՆ ԶՈՒԲՈՎԻ

ԹԱՐԳՄԱՆԵՑ **ՐԱՖՖԻ**

Թիֆլիսում գինն է 1 ռ. 20 կ.
Թիֆլիսից դուրս . . . 1 ռ. 50 կ.

Վաճառվում է

„Մշակի“ խմբագրատանը. „Կենտրոնական գրավաճառանոցում.“ Զաքարիա Գրիգորեանի „Կովկասեան գրավաճառանոցում.“ պ. Շահվերդեանի գրավաճառանոցում. պ. պ. Շահինեանցի և Տէր-Գրիգորեանցի ծխախոտի մագազինները։

ԵՐԿԱԹԷ



Մի հոգու համար 8 ռուբլուց, երկու հոգու համար 14 ռ., մահիճներ ծովային խոտով լցված 6—9 ռ. **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ**։ *Նոյն տեղը մեծ քանակութեամբ* ԱՄԱՆՆԵՐ, *դանակներ պատառաքաղներով, երկաթէ* ԳՐԻՉՆԵՐ, *կողպէքներ, թիեր, աղամարդկերանց և կանանց* ԹԱՄԲԵՐ, *մատուցարաններ,* ԿԼԷՕՆԿԱ, *ըէվոլվերներ,* ՀՐԱՑԱՆՆԵՐ, *սլրօցներ, կօնֆետներ,* ԹԷՑ *1-ին հունձի և այլն 25% աւելի լաւ և էժան քան թէյ ուրիշ տեղ։*

19—100

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐ (ՅՈՒՆՎԱՐԻ 25)

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

„ՀԻՍԻՍԱՑԻՆ“ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

Մուրհակների կուրսը 3 ամսով Լօնդօնի վրա	$23\frac{3}{4}$ պէնս
» » 3 » Ամստերդամի վրա	»
» » 3 » Համբուրգի վրա	$202\frac{1}{4}$ մարկ
» » 3 » Փարիզի վրա	$249\frac{1}{2}$ ֆրանկ
Ոսկի	8 ռ. 30 կ.
Արծաթ	1 ռ. 33 կ.
Մաքսային կուպօններ	8 ռ. 30 կ.
Բօրսային դիսկօնտներ	7%
Պետական բանկի 5% տոմսակ 1-ին չրջանի	$95\frac{1}{4}$ ռ.
» » » » 2 »	91 ռ. 81 կ.
» » » » 3 »	91 ռ. 37 կ.
» » » » 4 »	$91\frac{1}{2}$ ռ.
» » » » 5 »	91 ռ. 12 կ.
Արևելեան 1 փոխառութեան տոմսակը	91 ռ.
» 2 » »	$91\frac{1}{2}$ ռ.
» » » »	91 ռ.
Ներքին 5% 1 փոխառութեան տոմսակը	$222\frac{1}{2}$ ռ.
» » 2 » »	218 ռ.
$5\frac{1}{2}$% ռենտա	$98\frac{1}{2}$ ռ.
Ակցիաներ փոխատու բանկի	430 ռ.
» Միջազգային բանկի	$355\frac{1}{2}$ ռ.
» Վոլժսկո—Կամսկի բանկի	481 ռ. 50 կ.
» Սիբիրի առևտրական բանկի	317 ռ.
» Ռուսաց արտաքին առևտրի բանկի	269 ռ.
» Ռուսաց կալուածական կրեդիտի կենտրօն. բանկի	»
» Ռուսաց երկաթուղիների գլխաւոր ընկ.	261 ռ.
» Ռիբինսկո-Վոլոգդինսկի երկաթուղու	63 ռ.
» Ս. Պետերբ. կրակի դէմ ապահովութեան ընկ.	»
5% դրամական թերթեր փոխադ. կալուած. կրեդ. ընկ.	$131\frac{3}{4}$ ռ.
6% » Խարկովի կալուած. բանկի $43\frac{1}{2}$ տարի	$92\frac{1}{2}$ ռ.
» » Վիլնօի » » » »	91 ռ.
» » Պոլտավայի » » » »	$81\frac{3}{4}$ ռ.
» » Մոսկվայի » » » »	$95\frac{3}{4}$ ռ.
» » Բես.—Ցավ. » » » »	92 ռ.
$5\frac{1}{2}$% » Խերսօնի » » » »	$92\frac{1}{4}$ ռ.
Բօրսայի տրամադրութիւնը	Ամուր
Յորեն ռուսաց 10 պուդ	$13\frac{1}{2}$ ռ.
Յորեն սակսոնկա » »	14 ռ.
Յորեն	Ամուր
Հաճար 9 պուդ	$8\frac{3}{4}$ ռ.
Հաճար	Հանդարտ
Վարսակ 6 պուդ	4 ռ. 85 կ.
Վարսակ	Հանդարտ
Գարի 8 պուդ	6 ռ.
Վուշի սերմ 9 պուդ	13 ռ.
Հաճարի ալիւր 9 պուդ	9 ռ.
Ալիւրը	Հանդարտ
Կանեփ Բժեվի	$40\frac{1}{2}$ ռ.
» սովորական	$33\frac{1}{2}$ ռ.
» ընտիր	»
Թել Սիբիրի	41 ռ.
» Կամայի	40 ռ.
Վուշ	Ամուր
Կանեփ	Հանդարտ
Կրուպչատկա Սարատովի 5 պուդ	$12\frac{1}{2}$ ռ.
» Նիժեգորոդեան 5 պուդ	$12\frac{1}{4}$ ռ.
Լիլիփարի ձէթ քաղցր	8 ռ. 60 կ.
Կերոսին ամերիկական	2 ռ. 30 կ.
» ռուսաց	1 ռ. 30 կ.
Ձէթ	10 ռ.
Ճրագու զեղին մոմի համար 2 անգամ հալուած 1 տեսակ	70 ռ.
» սապօնի	»
Խէժ ֆինլանդական	»
Կովի իւղ Սիբիրի	$9\frac{3}{4}$ ռ.
Պղինձ կտորներով պուդը	»
» թերթերով »	»
Երկաթ թերթերով պուդը	»
Կովի կաշի չոր, պուդը	13 ռ.
» » հում »	5 ռ. 10 կ.
Սպիրտ 40% վեդրօն	»
Շաքար բաֆինադ 1 տեսակ պուդը	8 ռ. 80 կ.
» » 2 » »	»
Շաքարաւազ	8 ռ. 5 կ.
Պօտաշ բերկօվից	28 ռ.

Дозволено цензурою, Тифлисъ, 26 Января 1883 года.

Типогр. Главн. Упр. Главнонач. гражд. час., Лор.-Меник. ул. каз. д.